Հավելված N 12

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(հարկիրճ շարադրանք)

1. ՈԼՈՐՏԸ

ՀՀ Քննչական կոմիտեի լիազորություններն են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով իր իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ նախաքննության կազմակերպումը և իրականացում: Որպես միչդատական վարույթ իրականացնող մարմին ՀՀ քննչական կոմիտեն սերտ փոխհամագործակցում է իրավապահ մյուս մարմինների հետ, ինչպես նաև մասնավորապես հետաքննության մարմինների, ինչպես նաև ՀՀ և դատախազության հետ: Դատախազությունը հսկողություն է իրականացնում միչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

ՀՀ քննչական կոմիտեն՝ որպես նախաքննություն իրականացնող մարմին պարտավոր է ձեռնարկել բոլոր միջոցառումները, որպեսզի իր գործունեության արդյունքում քրեական օրենսգրքերով չթույլատրված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի և քրեական օրենքով նախատեսված դեպքերում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվի: ՀՀ քննչական կոմիտեի քննիչները քրեական գործի պատշաճ քննությունն ու դրա արդյունավետությունն ապահովելու նպատակով կատարում են մի շարք քննչական գործողություններ, այդ թվում՝ նշանակում փորձաքննություններ, դատավարական փաստաթղթերը ներկայացնում թարգմանության և այլն: Քննված քրեական գործերով հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների պարզումը և դրանք վերացնելու և կանխելու ուղղված միջոցների ձեռնարկելու նպատակով՝ համապատասխան մարմիններին միջնորդագրերի ներկայացնելը, հանցագործությունների քննության մեթոդիկայի ուսումնասիրությունը, քննության դրական փորձի ներդրումը քննչական պրակտիկայում, ստացված դիմումների և բողոքների քննարկումն ու լուծումը, ինչը վերջնական արդյունքում ձգտում է՝ քննության որակի, բազմակողմանիության, լրիվության, օբեկտիվության և արդյունավետության ապահովում, մարդու և քաղաքացու իրավունքների, հիմնարար ազատությունների, անձնական անձեռնմխելիության և մյուս իրավունքների պաշտպանության ապահովում, նախաքննության ժամկետների անհարկի ձգձգումների բացառում, պետությանը և քաղաքացիներին պատճառված վնասի վերականգնման ապահովում, ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու հարցերի լուծում, կոռուպցիոն երևույթների ծագման, դրանց պատճառների և նպաստող պայմանների բացահայտման ու դրանց կանխմանն ուղղված գործուղությունների իրականացումը որը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի ծրագրից:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ քննչական կոմիտեի կողմից իրականացվող գործունեության հիմնական նպատակն է քրեական գործերի քննությունը, որի շրջանակներում կարող է անհրաժեշտություն առաջանալ նշանակել մի շարք փորձաքննություններ, դատավարական փաստաթղթերը ներկայացնել թարգմանության, իրավական օգնության համար կազմել և ուղարկել միջազգային հարցումներ՝ համապատասխան երկրի պաշտոնական լեզվով, քննիչներին վերապատրաստելու և պատրաստելու ուսուցումը կազմակերպելու համար ներգրավել մի շարք դասընթացներում, համապատասխան վերապատրաստման ծրագրերում, մասնագիտական պատրաստում անցնող ունկնդիրներին կրթաթոշակի տրամադրում և ՀՀ քննչական կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավում:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

ՀՀ քննչական ծառայություններ ծրագրի համար 2021 թվականին պետական բյուջեից նախատեսում է 8.560.406.2 հազ. դրամ, 2022 թվականին՝ 8.456.500,5 հազ. դրամ և 2023 թվականին 8.594.998,2 հազ. դրամ: